ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Գործի վարույթը կարճելու մասին

ԵԴ2/3935/02/24 | ք. Երևան
2 Հուլիս 2024թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/3935/02/24 քաղաքացիական գործի վարույթը կարճելու հարցը՝

ՊԱՐԶԵՑ

«ՄՏԿ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Ընկերություն) էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Գազպրոմ), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ՊՄ-ի, հայցելով՝ անվավեր ճանաչել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար «G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված №175/GArm/24_4.3_016/02.05.24 ծածկագրով (այսուհետ՝ նաև Ծածկագիր) մրցակցային ընտրության հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր):
Հայցվորը ներկայացրել է նաև միջնորդություն գործով դատական նիստ հրավիրելու մասին:
Դատարանը 23.05.2024 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստացել է 23.05.2024թ.-ին և հայցադիմումը կրկին ներկայացրել է 27.05.2024թ.-ին:

Դատարանը 29.05.2024 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և դատական նիստ նշանակելու մասին:
Պատասխանողը 03.06.2024 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան:
Հայցվորը 01.07.2024թ. ներկայացրել է գործի վարույթը կարճելու մասին միջնորդություն՝ ՔԴՕ 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով:
Դատարանը գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:
Օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել իր պահանջներից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությունն ավարտելը:
Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը կամ դիմողը հրաժարվել է պահանջից:
Օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում, բացառությամբ (...):
Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը դատական նիստից դուրս ներկայացնում է պահանջներից հրաժարվելու մասին գրավոր միջնորդություն, ապա առաջին ատյանի դատարանը միջնորդությունն ստանալու պահից տասնօրյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ պահանջներից հրաժարվելու մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ պնդում է պահանջներից հրաժարվելու իր միջնորդությունը կամ պատշաճ տեղեկացված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:
Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ պահանջներից հրաժարվելու միջնորդությունը ներկայացնում է իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջնորդությունը ներկայացվել է իրավաբանական անձ հանդիսացող հայցվորը, Դատարանը գտնում է, որ գործի վարույթը ենթակա է կարճման՝ առանց դատական նիստ հրավիրելու:
Դատական ծախսերի բաշխման հարցի լուծում.
Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման (...) հարցերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Դատարանն արձանագրում է, որ ՔԴՕ 110-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բացառությունների բացակայությամբ պայմանավորված դատական ծախսերը կրում է Հայցվոր կողմը, որպիսի պարագայում անդրադառնալով պետական տուրքին, Դատարանը գտնում է, որ Հայցվորի կողմից նախապես վճարված լինելու արդյունքում պետական տուրքի մասով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Քաղաքացիական գործի վարույթը կարճել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու օրվանից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2024.07.02 19:19:05 AMT

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am